





Փաստ. անվանումը	ԵՄՀ Հասարակայնության հետ կապերի և զովագրի բաժնի գործունեության կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-13-01
Հաստատման ամսաթիվը	02/11/2009
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ 
Հաստատող	Մուրեն Օհանյան/Նախագահ 



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
12/12/2014	Փոխվել է կենտրոնի անվանումը "Հասարակայնության հետ կապերի բաժին"-ը վերանվանվել է "հասարակայնության հետ կապերի և զովագրի բաժին"	Մուրեն Օհանյան/Նախագահ 



ԿԱՐԳ

Եվրասիա միջազգային համալսարանի հասարակայնության հետ կապերի և գովազդի բաժնի գործունեության

1. Ընդհանուր դրույթներ.

- 1.1. Եվրասիա միջազգային համալսարանի /այսուհետ՝ Համալսարան/ հասարակայնության հետ կապերի բաժինը Եվրասիա միջազգային համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից է:
- 1.2. Հասարակայնության հետ կապերի բաժինը գործում է Համալսարանի կանոնադրության և սույն կարգի դրույթների հիման վրա:

2. Հիմնական նպատակները՝

- 2.1. Համալսարանական իմիջի բարձրացում,
- 2.2. հանրապետությունում և նրա սահմաններից դուրս համալսարանի ներկայացում,
- 2.3. Համալսարանի գործունեության նկատմամբ հասարակության ուշադրության արժանացում՝ ՁԼՍ-ների հետ հաճախակի համագործակցության տարբեր միջոցների կիրառմամբ (Համալսարանում տեղի ունեցող ամենատարբեր միջոցառումների լուսաբանման համար տարբեր հեռուստաընկերությունների հրավիրում, Համալսարանի ղեկավար կազմի հետ հարցազրույցների կազմակերպում, տպագիր մանուլում համալսարանական կյանքի լուսաբանում, համայնքային և մարզային կառույցների հետ համագործակցություն):
- 2.4. Համալսարանի ստորաբաժանումներին համալսարանի գործունեության առանձնահատկությունների և ուժեղ կողմերի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության տրամադրում:

3. Հիմնական գործառույթները՝

- 3.1. Համալսարանի հեղինակության բարձրացման նպատակով PR արշավների կազմակերպում,
- 3.2. Հետևողականորեն համալսարանի իմիջի ստեղծման և բրենդի կառուցման ուղղությամբ աշխատանքների իրականացում,
- 3.3. ՁԼՍ-ների հետ կայուն և երկարատև հարաբերությունների հաստատում և զարգացում,
- 3.4. ԲՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության լուսաբանում,
- 3.5. ՁԼՍ-ների գործունեության օպերատիվ մոնիտորինգ՝ ԲՈՒՀ-ի հետ կապված տեղեկատվության բացահայտման և բացասական լրահոսի բացառման համար,
- 3.6. Համալսարանական հատուկ միջոցառումների կազմակերպում (բաց դռներ, կոնֆերանսներ, սեմինարներ, թրեյնինգներ, հանդիպումներ անվանի գիտնականների և մասնագետների հետ և այլն):
- 3.7. Համալսարանի պատմության և գործունեության վերաբերյալ գրքերի, բուկլետների և տեղեկագրերի մշակում և հրատարակում ինչպես նաև գովազդային պաստառների պատրաստման և տեղադրման աշխատանքների կազմակերպում,
- 3.8. Համալսարանի ինտերնետային կայքի համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում:
- 3.9. Համալսարանի գիտական տեղեկատուի տպագրման նախապատրաստում և հրատարակման կազմակերպում:

4. Բաժնի կառավարումը.

- 4.1. Համալսարանի հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարումը իրականացնում է, որը նշանակվում և ազատվում է Համալսարանի Ռեկտորի հրամանով: Հասարակայնության հետ կապերի պատասխանատուն ենթարկվում է Համալսարանի պրոռեկտորին:

- 4.2. Հասարակայնության հետ կապերի բաժնի պատասխանատունն իր լիազորությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր գործողությունների համար:
- 4.3. Բաժնի Պատասխանատունն իր գործառույթների պատշաճ իրականացման համար Ռեկտորի անմիջական հրահանգներով կամ հրամաններով բաժնի աշխատանքների մեջ կարող է ներգրավել Ռեսանողական խորհրդի, Կարիերայի կենտրոնի և այլ ստորաբաժանումների աշխատակիցների /ժամանակավոր/: